

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/7

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Նվեր Կարապետյանի 21.08.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 23.07.2015 թ-ի 1684 որոշման դեմ:

Քաղաքացի Նվեր Կարապետյանի գանգատում բերված փաստարկները.

29.05.2015թ.-ին Մաշտոցի հարկային տեսչությունից ստացվել է 25.05.2015թ-ով ամսագրված թիվ 1486 որոշումը, որով Նվեր Կարապետյանին առաջադրվում է 568.968 դրամի չափով ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն՝ կապված 22.11.2014 թ-ին «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի հետ: Որոշմանը կից հարկային մարմնի կողմից ներկայացվել է նաև «Նախնական հաշվարկ հարկային պարտավորությունների վերաբերյալ»:

Նշյալ պարտավորությանը չհամաձայնվելու առնչությամբ 22.06.2015թ-ին դիմում-գանգատ է ներկայացվել գանգատարկման հանձնաժողով՝ նշելով անհամաձայնության պատճառները: Այնուհետև 18.07.2015թ.-ին ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը մասնակիորեն բավարարել է խնդրանքը, որի հետևանքով Մաշտոցի ՀՏ պետին հանձնարարվել է կայացնել նոր որոշում՝ հաշվի առնելով 2014թ.-ի 4-րդ եռամսյակի համար գանգատաբերի կողմից ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի հանգամանքը:

Միաժամանակ գանգատարկման հանձնաժողովը հղում է կատարել, որ հաշվարկը պետք է կատարվի «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով.

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն, ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը»:

Ի կատարումն գանգատարկման հանձնաժողովի կայացրած որոշման, 23.07.2015թ-ին Մաշտոցի ՀՏ-ի կողմից կայացվել է թիվ 1684 որոշումը, իսկ դրան կից հաշվարկում հաշվի է առնվել նաև վճարված հարկային պարտավորության մասը: Ըստ այդ հաշվարկի ԱԱՀ-ի գումարը կազմել է 358.403 դրամ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի հիմքով հաշվարկված տույժը՝ 72.577 դրամ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիմքով հաշվարկված 5 % տուգանքը՝ 143.362 դրամ, ընդամենը 494.294 դրամ:

23.07.2015թ-ի Մաշտոցի ՀՏ-ի թիվ 1684 որոշմանը և դրան կից հաշվարկին գանգատաբերը համաձայն չէ հետևյալ պատճառներով.

1) ԱԱՀ-ի հաշվարկման համար հարկային մարմինը հիմք է ընդունել 2.150.000 դրամի գումարի մեծությունը՝ որպես սովորաբար կիրառվող գին, այնինչ, հիմք պետք է ծառայեր հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը («ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մաս), որի դեպքում ԱԱՀ-ն կկազմեր՝ 286.724 դրամ, տույժը՝ 58.061 դրամ, տուգունքը՝ 114.690 դրամ, ընդամենը՝ 379.425 դրամ: Այսինքն, ՀՏ-ի կողմից հաշվարկված հարկային պարտավորությունն այս իմաստով ավելի է 114.869 դրամի չափով:

2) հարկ վճարողը պետք է տեղյակ լինի, թե ինչ տեղեկատվական բազայից է օգտվել հարկային մարմինը տվյալ հաշվարկը կատարելիս: Գանգատաբերը խնդրում է նոր հաշվարկ կատարելու դեպքում տրամադրել այն տեղեկատվական բազան կամ հղում կատարել ինտերնետայրն այն կայքին, կամ տեղեկության այն աղբյուրին, որտեղից կիրառելի այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում սովորաբար կիրառվող գնի մասին, քանի որ մինչ այժմ կատարած հաշվարկներում հարկային մարմինը հաշվի է առել միայն մաքսային մարմինների տեղեկատվական բազայում առկա մեքենայի մակնիշը և արտադրության տարեթիվը, որը չի կարող բնորոշել 1997թ. արտադրության բոլոր «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենաներին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գանգատաբերը խնդրում է վերանայել Մաշտոցի ՀՏ 23.07.2015թ-ի թիվ 1684 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով Նվեր Կարապետյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը և հիմք ընդունելով Հանձնաժողովի 18.07.2015 թ-ի թիվ 29/4 որոշումը պարզել է, որ 06.06.2015թ. դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 494.294 դրամ, որից ապառք 278.405 դրամ, տույժ 72.577 դրամ, տուգանք՝ 143.362 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 23.07.2015 թ-ին ընդունվել է թիվ 1684 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Նվեր Կարապետյանից 494.294 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քաղաքացի Նվեր Կարապետյանից 494.294 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունից ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Նվեր Կարապետյանը 01.11.2014 թ-ին և 22.11.2014 թ-ին վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող համապատասխանաբար «VAZ 21703-110-01» և «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենաներ: Մասնավորապես, Նվեր Կարապետյանի (վաճառող) և Մաքսիմ Սարգսյանի (գնորդ) միջև 22.11.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագիր, որի համաձայն Նվեր Կարապետյանը Մաքսիմ Սարգսյանին է վաճառել «Mercedes-Benz C 230» մակնիշի 1997 թ-ի արտադրության

ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառված «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենան Նվեր Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանել է (ծեռք է բերվել) 01.11.2014 թ-ից:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ քաղաքացի Նվեր Կարապետյանի կողմից 22.11.2014 թ-ի «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի» պայմանագրով «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում:

Ինչ վերաբերվում է «Mercedes-Benz C 230» մակնիշի ավտոմեքենայի վաճառքից առաջացած ԱԱՀ-ի գծով պարտավորությունների հաշվարկմանը, ապա Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով, որի համաձայն. «ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով,

...

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը»:

Քննարկվող դեպքում Նվեր Կարապետյանի ԱԱՀ-ի գծով պարտավորությունները «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվելու դեպքում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները (հաշվի առնելով 80.050 դրամ ԱԱՀ վճարված լինելու հանգամանքը) ենթակա են նվազեցման ընդամենը 114.869 դրամի չափով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 23.07.2015 թ-ի 1684 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները նվազեցնել ընդամենը 114.869 դրամով, այդ թվում՝ հարկ 71.681 դրամ, տույժ 14.516 դրամ, տուգանք 28.672 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝

